

ԱՅԼԵԿ ԱՅԼԵՔ

Արագրներում կարդումնեք որ Զմիւռնիացի Սրարթալեան Եղբարք տեղւոյն Տղայոց գպրոցական շէնք կառուցանելու համար բանակցութիւն են ըսկու Գեր. Մելքիսեդեկ Եպիսկոպոսի հետ:

Սրարթալեան Եղբարք շատ առիթներում Զմիւռնիայի բարերար են հանդիսացել, գպրոցական շէնքի կառուցումն թէև նոցա բարեգործութեան վերջինը լինելու չէ. սակայն պատկը կարող է լինել. Աղօթումնեք որ ամեն հայաբնակ քաղաքներ ունենային Սրարթալեան Եղբարք հետեւղներ. Աստուած ի հաճոյս իւր ընդունի Սպարթալեան Եղբարք բարեգործութիւնները և վարձատրէ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ:

Ըստ Հակալութեամի ստացանք Պ. Բ. Մերիմանեանի հրատարակած «Ներսէս Մեծ» և «Արքեցողի Մահը» գրքոյիները. Յաջողութիւն ենք ցանկանում յիշեալ պարոնին՝ իւր մտադրած նպատակի մէջ:

Ըստ Հակալութեամի ստացանք Տեղեկագիր և Համարատուութիւն Եղբային Վարչութեան Զմիւռնիոյ վերնագրով գրքուկը. Այդ գրքովից երեք օրինակ էին ուղարկուած, մինը յանուն Սիխոգի, մինը Տպարանական Ժողովը և միւսը Խմբագրութեան. Ցանկալի էր որ բոլոր հայալնակ քաղաքները կամենային հետեւղ լինել Զմիւռնիային, որով միջոց կունենայինք ծանօթ լինել մեր Տաճկաստանցի Եղբարք կացութեանը.

ՊԱՇՕՆԱԿԱՆՔ.

ԵՐՉԱԲԵՐԱԿԱՆ ՍԻՆՈԴԻ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՈՆԻ

Ըստ Հրամանի և անօրէնութեան Վեհափառ և Սրբազնագոյն Կաթողիկոսի ամենայն Հայոց Տ. ՄԱԿԱՐՈՅ Սինօգոս Սրբոյ Էջմիածնի պարտ համարի ազգ առնել, զի ի 15-ն Յունիսի ներկայ տարւոյս յաւուր Տօնի Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի՝ ունի լինել օրհնութիւն Սրբալոյս Միւռօնի ըստ ծիսի Սրբոյ Եկեղեցւոյ Հայաստանեայց:

Ուստի Ատեան Սինօգիս աւաջադրէ առաջնորդոց լիճակաց բարեհաճել Հրատարակել զայսմանէ ի լուր և ի գիտութիւն բարեղաշտ ժողովրդոց՝ հոգեւորականաց և աշխարհականաց, որպէս

զի ցանկացողք ի նոցունց՝ փութասցին ի ժամանակին հասանիլ ի Մայր Աթոռս և Հաղիսատես գոտանելով օրհնութեած Խւզոյն Արքութեան հոգեորապէս վայելել զշնորհաբաշխութիւն Նորին և միոիթարիլ ըստ պահծալի օրինակի արժանայիշատակ և բարեպաշտ նախնեաց մերոց։

Ի ՅՈՒՆԱԾԱՐ ԱՄՍՈՅ ՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈԴԻ.

Դեր. Վահրամ Եպիսկոպոս Մանկունի իւր ծանուցեալ գործի համար անցեալ Նոյեմբերի 14 - ին յանուն Վեհափառ կաթողիկոսի յայտարարութեամբ խնդրել էր մի վախճանական ելք։ Վեհափառ կաթողիկոսը այս յայտարարութիւնը Նոյեմ. 23 - ին թ. 158 յահճնեց Սինօդին մակագրելով « Յանձնեմք ի շուտափոյթ և ի վախճանական անօրէնութիւն Սինօդին Սրբոյ Եջմիածնի » :

Սինօդը ի պատասխանի մակագրութեան Վեհափառ կաթողիկոսի ի 13 - ն անցեալ Դեկտեմբերի յայտարարութեամբ առ Վեհափառ կաթողիկոսն յայտնումէ գործի հանգամնքը և խնդրումէ Նորին Վեհափառութեան տնօրէնութիւնը, մանրամասնեւլով Դեր. Վահրամ Եպիսկոպոսի գործը ըստ այսմ։

Հանգուցեալ ի Տէր Գէորգ Գ, կաթողիկոսի մահից յետոյ Սինօդի անգամք Վեհաբանի կայքը և Հանգուցեալ Հայրապետի գոյքը ըստ օրինաց ցուցակագրելիս՝ շատ սակաւ բան են գոնում՝ քան որ ակնկալումէին, նա մանաւանդ ի նկատի ունելով Հանգուցեալ Հայրապետի խօսքը թէ, ինքն իւր հստատած ձեմարանը ապահովել է նիւթական կողմից. ուստի և Սինօդը 1882 թ. Դեկտմ. 20 - ին և 23 - ին կայացրած օրագրութեամբ մի մասնաժողով է կարգում Սինօդի անգամ Գեր. Երեմիա Եպիսկոպոսի նախագահութեամբ խուզարկելու գողօնքը՝ կասկածելով Դեր. Վահրամ Եպիսկոպոս Մանկունու, որ Հանգուցեալ Հայրապետի քարտուզարն էր, Պ. Ստեփան Դէմիրձեանի, որ Վեհաբանի անտեսական մասն էր կառավարում և այլ ծառայից վերայ։ Սինօդը ըստ օրինաց և եկեղեցական կանոնաց անվաւեր է Համարում Վեհաբանի իրեղէնքը ցուցակագրելիս Երեւեցած « կուակաձե » վերնագրով թուղթը՝ որով՝ որպէս թէ Հանգուցեալ կաթողիկոսը յայտնումէր թէ, ոչինչ գոյք և կայք չունի։